Ծուշանիկ Կուրղինյան

Ինչու . . .

Այնտեղ՝ խրախճանք շեն պալատներում,
Ոսկի և արծաթ,
Սեղաններ առատ,
Չարն է անպատիժ, դավերին՝ ներում,
Վշտերից՝ անտես,
Բախտը ժպտերես:

Այստեղ՝ սև կարիք, ճնշում, մաշող սով,
Որբերի լաց, կոծ,
Քաղցածներ անգործ .
Լքած գերիներ, շնչող լոկ հուսով,
Ստրուկ և անբախտ .
Կործանիչ ժանտախտ:

Այնտեղ՝ շքեղ փառք, անարժան պատիվ,
Ձեռքեր արյունոտ,
Խղճեր մրուրոտ,
Լիրբ շվայտության մոլություն անթիվ
Տեր ու տիրական,
Եվ տենչեր վարձկան . . .

Այստեղ՝ կախաղան, աքսոր, բանտ, մտրակ,
Կյանքի սև գիշեր,

Տրորած լեշեր.
Բողոք, անեծք, ճիչ բռնի լծի տակ,
Արցունք ամեն օր,
Զրկանք ահավոր . . .

Այնտեղ՝ փափկասուն, սպիտակ ձեռքեր
Կյանքից հղփացած,
Փորեր յուղ կապած .
Սիրո, հեշտանքի շռայլ հաճույքներ,
Ինքնիշխան, անկախ,
Ամենքից անվախ . . .

Այստեղ՝ կոր թիկունք, ձեռքեր կոշտացած
Եվ ծախվածների,
Փոր հացի գերի
Ագահ հայացքներ, խոնավ, անլույս, ցած,
Խարխլած նկուղ՝
Մարդը՝ անպտուղ:

Ինչո՞ւ . . . ո՛վ աստված, ինչո՞ւ այս ամեն
Անարդար վիճակ
Եվ նույն երկնի տակ,
Նույն հողի վրա, միևնույն հյութեն
Չկա հավասար
Ոչ մի գործ արդար . . .

1907 թ . , 5 ապրիլի